

ԻՆՉՈՒՆ ԶԲԱՂՎԵԼ ԳԻՏՈՒԹՅԱՄԲ

2020թ. օգոստոսի 24

Հարցազրույց ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանի հետ երիտասարդների՝ գիտությամբ զբաղվելու մասին

✚ Որքանով եք կարևորում երիտասարդ կադրերի ներգրավվածությունը Հայաստանի գիտության՝ մասնավորապես Բյուրականի աստղադիտարանի գիտական ներուժի զարգացման գործում:



Դա հենց առաջնահերթ հարցերից է: ԲԱ-ի և ընդհանրապես Հայաստանի բոլոր գիտնականների տարիքային կտրվածքն այնպիսին է, որ համարյա բացակայում է միջին սերունդը, և, տարեց գիտնականների հեռանալուց հետո, ինչը տեղի կունենա առաջիկա 10-15 տարում, ամբողջ հոգսը կմնա

երիտասարդների ուսերին: Այսօրվա երիտասարդությանը պետք է շուտափույթ կերպով ներգրավել բոլոր գիտական, ինչպես նաև գիտակազմակերպական և ղեկավար աշխատանքների մեջ, որպեսզի նրանք շուտով պատրաստ լինեն ստանձնել Հայաստանի գիտնականների և գիտության վարչարարների դերը: ԲԱ-ում արդեն իսկ նման գործընթաց գնում է. համարյա բոլոր երիտասարդները ներգրավված են ներկա գիտական (այդ թվում՝ միջազգային) ծրագրերում, երիտասարդներից մի քանիսն արդեն ղեկավարում են ստորաբաժանումներ, զբաղեցնում են պատասխանատու պաշտոններ, ակտիվորեն մասնակցում են աստղադիտարանի գիտական և կազմակերպական կյանքին: ԲԱ տնօրինությունը և գիտական խորհուրդը մշտապես հետևում են երիտասարդների գիտական թեզերի ընթացքին և օժանդակում դրանց առաջխաղացմանը:

✦ **Ձեր կարծիքով ի՞նչ է անհրաժեշտ երիտասարդ ուսանողին գիտություն բերելու համար, քանի որ, ինչպես գիտենք, գիտնական դառնալու ճանապարհն այդքան էլ հեշտ չէ:**

Նախ և առաջ, իհարկե, հետաքրքիր գիտական կյանքի հեռանկար, սակայն միայն սա քիչ է: Պարզվում է, որ հետաքրքիր գիտական թեմաները, նույնիսկ միջազգային նախագծերը, գիտության մեջ առաջխաղացման հեռանկարները երիտասարդներին չեն կարող լիարժեք բավարարվածություն բերել, եթե բացակա է ֆինանսական և կենցաղային գործոնը: Գիտնական դառնալու համար մենք ամեն ինչ անում ենք, նույնիսկ միջազգային առումով այսօր ԲԱ-ն այդ ուղղությամբ ամենաակտիվ գիտական կենտրոններից մեկն է՝ իր բազմաթիվ գիտակրթական ծրագրերով, արտասահմանյան կապերով, գործուղումներով և այլն: Սակայն անհնար է երիտասարդին ստիպել մոռանալ կյանքի պայմանների մասին, թեև երբեմն երդվյալ նվիրյալներ նույնպես գտնվում են, ովքեր աշխատում են առանց որևէ այլ բան հաշվի առնելու:

ԲԱ-ում մի քանի առավելություններ կան, մասնավորապես մենք ծառայողական բնակարաններ ենք տրամադրում մեր աշխատակիցներին, օգնում ենք վերանորոգման հարցում, ապահովել ենք ողջ անձնակազմը ժամանակակից համակարգիչներով, համարյա բոլոր դրամաշնորհային նախագծերում ներգրավում ենք երիտասարդ կադրերի, հնարավորության դեպքում տալիս ենք հավելավճարներ, զանազան ասպարեզներում ակտիվ լինելու համար հոնորարներ և այլն: Օրինակ՝ եթե երիտասարդների **ամսական կանոնավոր աշխատավարձը** միջինում շուրջ 107 հազար դրամ է (ինչն իհարկե մեր երկրի ամենամեծ թերություններից մեկն է, որ երիտասարդ գիտաշխատողն անտեսված է), ապա լրացուցիչ ծրագրերից ավելանալով՝ այն դառնում է շուրջ 180 հազար դրամ: Ճիշտ է, այստեղ խիստ տարաբաշխում կա՝ ակտիվ երիտասարդներ կան, ովքեր ստանում են համարյա մինչև 300 հազար դրամ, իսկ ոմանք ստանում են պետության կողմից սահմանված նվազագույնը, սակայն դա երևի արդար է, երբ վարձատրությունն էլ կատարվում է ըստ պատասխանատվության աստիճանի, աշխատանքի ծավալի և ակտիվության:

✦ **Ի՞նչ քայլեր է ձեռնարկում ԲԱ-ն երիտասարդներին գիտություն բերելու համար:**

Բազմաթիվ գիտակրթական միջոցառումներ են կազմակերպվում ԲԱ կողմից: Այս աշխատանքը պետք է սկսել թերևս նույնիսկ նախադպրոցական տարիքից, քանի որ մարդու մոտ հետաքրքրությունները ձևավորվում են վաղ մանկությունից: Այլ բան է, որ մասնագիտության ընտրության համար հիմնական քայլերը կատարվում են ավագ դպրոցական տարիքում, սակայն եթե մարդու մոտ չլինեն համապատասխան նախասիրություններ, արդեն անհնար կլինի խոսել գիտության ուղու մասին:

Թվարկեմ միջոցառումներից մի քանիսը:
2014-ից անցկացնում ենք **Բյուրականյան գիտաճամբարների** ամենամյա շարքը. դրանց հրավիրվում են 12-15 տարեկան շնորհալի դպրոցականներ և մեկշաբաթյա դասընթացների ընթացքում տրվում են զանազան նախնական գիտելիքներ, տեղի է ունենում առաջին ծանոթացումը



գիտության հիմքերի հետ: Այստեղ պետք է նշեմ մեր հանրային կապերի ղեկավար Սոնա Ֆարմանյանի նախաձեռնությունը և ներդրումը: Հայկական աստղագիտական ընկերության հետ համատեղ 2012-ից ունենք **Աստղագիտական դպրոցական դասախոսությունների ծրագիրը**. պրոֆեսիոնալ աստղագետներն այցելում են Երևանի, ՀՀ մարզերի և Արցախի դպրոցներ և անցկացնում են հանդիպումներ և դասախոսություններ դպրոցականների հետ: Մեր գիտաշխատողներից մի քանիսը ֆիզմաթ մասնագիտացված դպրոցներում վարում են աստղագիտական խմբակներ, որի արդյունքը լավ երևում է **Միջազգային աստղագիտական օլիմպիադաներում**, որտեղ Հայաստանի թիմը լավագույններից է իր բազմաթիվ մեդալներով: Այս հաջողությունների մեջ կարևորագույն ներդրում ունի ԲԱ գիտաշխատող, ֆմգթ Մարիետտա Գյուլգադյանը: Մի քանի միջոցառումներ (այդ թվում՝ միջազգային ծրագրեր) ունենք ֆիզիկայի և աստղագիտության ուսուցիչների վերապատրաստման ուղղությամբ: ԲԱ գիտնականները դասավանդում են **ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի Ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնում**, որտեղից հենց գալիս են աստղագիտական կադրերը: Բյուրականում 2006-ից ամեն երկու տարին մեկ անգամ անցկացնում ենք **Բյուրականյան միջազգային ամառային դպրոցներ (BISS)**

երիտասարդական դպրոցներ, որտեղ ուսանողները և երիտասարդ աստղագետները ծանոթանում են աստղագիտության և աստղաֆիզիկայի զանազան նրբություններին, մասնագիտական հմտություններ են ձեռք բերում: Մինչ օրս մեր դպրոցներին մասնակցել է 30-ից ավելի երկրների շուրջ 200 երիտասարդ, իսկ դասախոսական կազմում եղել են 17 երկրների 56 դասախոս, այդ թվում՝ աշխարհահռչակ գիտնականներ: BISS-ը համարվում է աշխարհի աստղագիտական լավագույն դպրոցներից մեկը: ԲԱ երիտասարդները նույնպես հաճախ մեկնում են արտասահման՝ մասնակցելու այլ երկրներում կազմակերպվող նմանատիպ դպրոցների, ինչպես նաև մասնագիտական գիտաժողովների և այլ միջոցառումների: Սա էլ մեծ փորձ է բերում:



Նշեն նաև, որ բացի մասնագիտական միջոցառումներից կարևոր է նաև երիտասարդներին ապահովել աշխատանքի լավ պայմաններով, կենցաղով և արժանավայել կյանքի պայմաններով, ինչը միշտ չէ, որ հաջողվում է: Սակայն մեր հնարավորությունների սահմաններում ամեն ինչ անում ենք, որ այդ հարցերն էլ լուծում ստանան:

✦ ԲԱ գիտաշխատողների քանի՞ տոկոսն են կազմում երիտասարդ գիտաշխատողները:

Մենք այժմ ունենք 35 գիտաշխատակից, որոնցից 12-ն երիտասարդ են, ինչը կազմում է 34%: Հայաստանի գիտության համար դա միջինից բարձր է, սակայն ես չէի բավարարվի դրանով, քանի որ ներկայումս համարյա մյուս բոլոր գիտաշխատակիցները տարեց են, իսկ դա նշանակում է, որ որքան էլ նրանց երկարամյա բեղմնավոր գործունեություն ցանկանանք, առաջիկա 10-15 տարում նրանց թիվը կտրուկ պակասելու է: Ի վերջո երիտասարդներն են Հայաստանի գիտության ապագան, և այստեղ, բացի թվաքանակից, անհրաժեշտ է նաև որակյալ կադրեր պատրաստել՝ ապագա գիտության պատշաճ մակարդակն ապահովելու համար:

✦ Վերջին տարիներին նշանակալից ի՞նչ գիտական արդյունքներ են ստացվել տարբեր սերունդների գիտաշխատողների համատեղ գործունեության արդյունքում:

Ուրախալի է, որ մեր համարյա բոլոր գիտական արդյունքները ստացվում են երիտասարդների մասնակցությամբ, ինչն ապահովում է տարբեր սերունդների կապը և համագործակցությունը: Կարող եմ նշել փորձառու գիտնական Ելենա Նիկողոսյանի և երիտասարդ Նաիրա Ագատյանի, փորձառու գիտնական Կամո Գիգոյանի և երիտասարդ Գայանե Կոստանյանի, փորձառու գիտնական, Գերմանիայի Ֆրանկֆուրտի համալսարանի պրոֆեսոր Արմեն Սեդրակյանի և երիտասարդ Արուս Հարությունյանի, փորձառու գիտնականներ Տիգրան Մաղաքյանի և Տիգրան Մովսիսյանի և երիտասարդ Հասմիկ Անդրեասյանի, ինչպես նաև ինձ հետ համատեղ իմ գիտական խմբի երեք երիտասարդների՝ Հայկ Աբրահամյանի, Գուրգեն Պարոնյանի և Գոռ Միքայելյանի աշխատանքները, որոնք բոլորն էլ մտել են ԲԱ տարեկան կարևորագույն արդյունքների մեջ: Դրանք տիեզերական նոր օբյեկտների հայտնաբերումներ են (երիտասարդ աստղախմբեր, Հերբիգ-Հարո օբյեկտներ, հազվագյուտ ֆուրներ, ակտիվ միջուկներով բազմաթիվ նոր գալակտիկաներ, փոփոխական ռադիոաղբյուրներ, ենթակարմիր հզոր գալակտիկաներ, ռենտգենյան ճառագայթմամբ գալակտիկաներ և այլն), դրանց բազմակողմանի ուսումնասիրություններ, նոր մեթոդների ներմուծում և նույնիսկ վիրտուալ աստղադիտարանի կիրառմամբ ժամանակակից գիտական արդյունքների ստացում: Այս արդյունքները տպագրվել են միջազգային այնպիսի հեղինակավոր ամսագրերում, ինչպիսիք են Astronomy & Astrophysics (A&A), Monthly Notices of the Royal Astronomical Society (MNRAS), Physical Reviews, Astrophysics & Space Science (Ap&SS), Publications of the Astronomical Society of Australia (PASA), Astronomische Nachrichten (AN), Astronomy & Computing, Astrophysics (ՀՀ ԳԱԱ ամսագիր, որ Springer հրատարակության կողմից թարգմանվում և վերահրատարակվում է անգլերեն):

Հարցազրույցը վարեց Մելինե Ասրյանը